

ՔԱՂԱՔ | ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ

ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ մակրոտէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր

ԱՂՐԲԵՋԱՆԸ ՊԱՐՏԱԿՈՐ Է ՀԱՏՈՒՑԵԼ ԱՐՑԱԽԻՆ ՀԱՍՑԿԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԲՈՆԱՋԱԿԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Պատմական Հայաստանի անբաժանելի մաս Արցախ-Ղարաբաղը դժկարին կացության մեջ հայտնվեց Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատումից հետո: Ղա տեղի ունեցավ 1918 թ., երբ ստեղծվեց Ադրբեջան կոչված նորարարական հանրապետությունը: Վերջինս ստեղծվեց Կենտրոնական Ասիայից այստեղ թափանցած անասնապահ ցեղերի համար, որոնց անվանեցին ադրբեջանցիներ (իսկ Վ.Լենինը դրանց անվանում է կովկասյան թաթարներ): Ստալինի վարած հակահայկական քաղաքականության հետևանքով Հայաստանի անբաժանելի մասը կազմող Արցախը 1923 թ. բռնակցվեց Ադրբեջանին: Արցախահայությունը 70 տարի այդպես էլ չհաշտվեց այդ անարդարության հետ և, ի վերջո, ամբողջ հայ ժողովրդի ջանքերով ազատագրվեց ու անկախություն ձեռք բերեց:

Հիմնաբառեր. Մեծ Հայք, Արցախ, Հայաստան, Արցախի ազատագրում, Ղարաբաղյան ազատագրական բանակ, Շուշի, ազատամարտիկ, ԼՂՀ, բնակչություն, տնտեսություն, վերականգնում, զարգացում, միասնացում

1990-ական թվականների սկզբներին համայն հայության միասնական ուժերով ազատագրվեց մեր պատմական ընդարձակ երկրի՝ Մեծ Հայքի (որի տարածքը կազմում էր ավելի քան 300 հազ.կմ²)¹ 10-րդ նահանգը՝ Արցախը: Մեծ Հայքի հյուսիսարևելյան մասում գտնվող այս նահանգը մշտապես որպես

¹ Տես՝ **Ս. Մելքումյան**, ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 2014, էջ 8:

վահան է ծառայել մեր հայրենիքը արևելյան տափաստանային վայրի ցեղերից պաշտպանելիս: Պատմական բոլոր փաստերը վկայում են, որ արևելյան ռազմատենչ քոչվոր ոչ մի ցեղ Արցախի տարածքով չի ներխուժել Մեծ Հայքի տարածք: Դրանք ջարդվել, հետ են շարտվել Արցախի սահմաններից և Հայաստանի տարածք են թափանցել հիմնականում հարավային շրջաններից:

Ղարաբաղի ու առհասարակ Հայաստանի արևելյան սահմանները արտաքին թշնամիներից պաշտպանելու գործում անգնահատելի դեր է խաղացել Արցախի խաչեն գավառի իշխանական Հասան-Ջալալյանների տոհմը: Վերջինիս իշխանները Գանձասարի վանքը դարձրել են Արցախ-Ղարաբաղ աշխարհի ոչ միայն կրոնական, մշակութային, այլև տնտեսական, պաշտպանական հզոր կենտրոն: Հենց այստեղ՝ Գանձասարի վանքում է շուրջ 300 տարի առաջ ձևավորվել Հայաստանը Ռուսաստանին միավորելու գաղափարը: Մեծ հավատ ունենալով քրիստոնյա այդ հզոր պետության նկատմամբ՝ հայ ժողովուրդը՝ հատկապես առաջավոր մտավորականությունն իր հույսը Ռուսաստանի հետ էր կապում՝ վերջինիս օժանդակությամբ վերջնականապես թոթափելու պարսկա-թուրքական լուծը: Ահա թե ինչու 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին՝ հատկապես ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմների ժամանակաշրջանում, Անդրկովկասի ողջ հայությունը, այդ թվում ամբողջ Արցախը ռուսներին դիմավորում էր աղուհացով, բազմակողմանիորեն աջակցում ռուսական զորքերին:

1813 թ. Գյուլիստանի պայմանագրով, որով ավարտվում էր 1803–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Արցախ-Ղարաբաղը միավորվում է Ռուսաստանի հետ՝ այդ ժամանակվանից դառնալով վերջինիս ամենահավատարիմ բարեկամը: Արցախ-Ղարաբաղի բազմաթիվ հայորդիներ դարձել են ռուսական բանակի զորավարներ, պետական գործիչներ, գիտնականներ և իրենց տաղանդը ներդրել այդ երկրի, ռուս ժողովրդի բարգավաճմանը:

Սակայն հազարամյակների ընթացքում թշնամիների դեմ հերոսական պայքարով իր անկախությունը պահպանած, Հայաստանի անբաժանելի մասը կազմող Արցախը դժվարին կացության մեջ հայտնվեց Անդրկովկասում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո: Այս անգամ դա տեղի ունեցավ Կարմիր բանակի զենքի ու թաթար-ադրբեջանական-մուսավաթական միացյալ ուժերով: Անդրկովկասում Ստալինի վարած հակահայկական քաղաքականության, ազգամիջյան, տարածական-վարչական հարցերը խիստ սուբյեկտիվ «լուծելու» հետևանքով Արցախ-Ղարաբաղ հայկական աշխարհը հայտնվեց ծանր վիճակում²: Մինչ այդ՝ 1918 թ. մայիսին, Բաքվում ստեղծվում է մուսավաթական կառավարություն: Այսպես է սկսվում Ադրբեջան կոչվող հանրապետության պատմությունը: Դրանից առաջ այդպիսի պետություն գոյություն չի ունեցել, «Ադրբեջան», «ադրբեջանցի» հասկացություններ առհասարակ չկային: Լենինը իր աշխատություններում դրանց անվանում է կովկասյան թաթարներ: Անդրկովկասի արևելյան մասում 12–13-րդ դարերից հետո այստեղ հանգրվանած քոչվոր թաթարների հետնորդները և շատ ավելի ուշ այդտեղ ձևավորված՝ վերը նշված հետադիմական, ազգայնամոլական կառավարությունը հենց առաջին օրերից սկսած վարում է խիստ հակահայկական քաղաքականություն: Մուսավաթական այդ նորաթուխ կազմավորումը ռազմատենչ վայրի ցեղերին բնորոշ բոլոր մեթոդները կիրառում է հազարամյակների փառավոր պատմություն ունեցող հայերի դեմ՝ ձգտելով

² Տե՛ս նույն տեղը, էջ 298:

իր ազդեցությունը տարածել նաև Արցախ-Ղարաբաղ հայկական նահանգի վրա: Ղարաբաղի հայությունը հերոսաբար պայքարում է իր անկախությունը պահպանելու համար և ստեղծում է սեփական կառավարման տեղական մարմիններ: Սակայն Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ մեծ փոփոխություններ են կատարվում նաև Անդրկովկասում: 1920 թ. ապրիլին 11-րդ կարմիր բանակի զենքի ուժով Բաքվում տապալվում է մուսավաթական կառավարությունը և ստեղծվում Ադրբեջանի խորհրդային Հանրապետություն: Ի դեպ, հիմնականում հենց այդ տարիներին սկսեցին գործածվել «Ադրբեջան», «ադրբեջանցի» հասկացությունները: Այդպիսի պետություն, ինչպես նշվել է, մինչ այդ չի եղել, իսկ Կենտրոնական Ասիայից այժմյան Ադրբեջանի տարածք թափանցած մահմեդականները մինչև 1930-ական թվականները բոլոր աղբյուրներում անվանվում են թաթարներ: Մինչև այժմ էլ այդ պետությունը իր սեփական այբուբենը չունի:

1920 թ. նոյեմբերին 11-րդ կարմիր բանակի ուժերով խորհրդային կարգեր են հաստատվում նաև Հայաստանում: Թվում էր՝ աշխարհում առաջինը սոցիալիստական պետության կազմում, առանց խոչընդոտների Հայաստանն իր անբաժանելի մասերի՝ Արցախի ու Նախիջևանի հետ պետք է ստեղծեր միասնական հանրապետություն: Դժբախտաբար, սկսվեց Արցախ-Ղարաբաղի վարչական ենթակայության՝ բոլշևիկների կողմից ստեղծված «հիմնահարցի» քաջքշուկը, որը շարունակվում է առ այսօր: 1921 թ. հուլիսի 5-ին Ստալինի և Նարիմանովի կամայականությամբ, ահաբեկումներով որոշվում է Լեռնային Ղարաբաղը ներառել Ադրբեջանի կազմում³: Այսպիսով՝ մայր երկրից բռնի կերպով պոկվեց 95%-ով հայաբնակ Արցախը: Շուրջ 70 տարի կոմունիստական ռեժիմի պայմաններում թույլ չէր տրվում մայր Հայաստանում Ղարաբաղի մասին նույնիսկ խոսել, առավել ևս՝ գրել: Միննույն ժամանակ, Ադրբեջանը լենինյան «բարեկամության» դրոշի ներքո, Նախիջևանի օրինակով, աննկատ փորձում էր Արցախ-Ղարաբաղը հայաթափել: Տնտեսական առումով հայկական այդ բարեբեր երկրամասը դարձել էր Ադրբեջանին հումք մատակարարող խոշոր բազա, վերամշակող ձեռնարկություններ չկային, երիտասարդներն աշխատանք չունեին և ստիպված հեռանում էին, դպրոցներում հայոց պատմության փոխարեն դասավանդվում էր Ադրբեջանի չեղած պատմությունը, իսկ հայոց լեզվի հաշվին ուսուցանվում էր «ազդիլի», արագորեն աճում էր թուրք-ազերիների քանակը: Սակայն հայոց պատմության մեջ ակնառու տեղ ունեցող, համաշխարհային գիտության, ռազմական գործի, պետական կառավարման բոլոր բնագավառներում հանրահայտ դեմքեր տված Արցախ-Ղարաբաղի բնակչությունը այլևս չէր կարող հանդուրժել թուրք-ազերիների հայատյաց քաղաքականությունը և մայր հայրենիքից արհեստական մեկուսացվածությունը:

Արցախի բնակչության համբերության բաժակը լցվեց 1988-ին: Այդ թվականի փետրվարի 20-ին Արցախի բնակչության մեծ մասը հավաքվեց Ստեփանակերտի հրապարակում, որտեղ գտնվում էին ինքնավար մարզի ղեկավար մարմինները, և օր ու գիշեր պահանջում էր՝ «ազատագրվել Ադրբեջանի գաղութային լծից» և «միանալ մայր Հայաստանին»: Ի դեպ, այդ օրերին Ղարաբաղի բնակչությանը միացավ նաև Ադրբեջանի տիրապետության տակ գտնվող Շահումյանի շրջանի ամբողջ հայությունը: Այս երկու հայկական վար-

³ Ս.Մելքումյան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., 1997, էջ 7:

չական միավորների ընդհանուր համաձայնությամբ պաշտոնապես հայտարարվեց գերագույն նպատակը՝ «ազատագրում Ադրբեջանի լծից, անկախություն»:

Ըստ որում, թեև Արցախի բնակչությունը պահանջում էր միացում մայր Հայաստանին, սակայն այդ ժամանակաշրջանում Հայաստանում իշխանության եկած «Հայոց համազգային շարժում» կուսակցությունը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ, միացման խնդիրը չլուծեց, և ուտքի կանգնած ամբողջ Արցախը ուղղակի հայտարարեց՝ անկախություն: Դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ զինված ուժերը և թուրք-ազերիների ուժերը կազմակերպեցին ցեղասպանություն Ադրբեջանի հայաբնակ բոլոր վայրերում: Առաջին վայրագությունները տեղի ունեցան 1988 թ. փետրվարի վերջերին Սումգայիթի հայության դեմ: Այստեղ թուրք-ազերիները ցուցադրեցին իրենց իսկական դեմքը՝ զազանային վարքագիծը Սումգայիթ քաղաքը կառուցած հայ բնակչության նկատմամբ: Նմանատիպ վայրագություններ տեղի ունեցան Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի մյուս բոլոր հայաբնակ վայրերում⁴:

Ադրբեջանում, փաստորեն, հայերի նկատմամբ իրականացվեց 1915 թ. Թուրքիայում տեղի ունեցած և ավելի այլանդակ մեթոդներով ցեղասպանություն: Այդ ժամանակ դեռևս գոյություն ունեցող Գորբաչովյան ղեկավարությունը ոչնչով չէր տարբերվում Թալեթի վարչակարգից:

Խորհրդային բանակի ու թուրք-ազերիների ավագակախների դեմ պայքարելու, Լեռնային Ղարաբաղի, Շահումյանի շրջանի, Գետաշենի հայությանը պաշտպանելու համար Արցախում և Հայաստանում ձևավորվեցին պաշտպանական ջոկատներ, որոնց հիման վրա հետագայում արագ կազմավորվեց Հայոց ազատագրական բանակը: Այդ բանակը շատ արագ համալրվեց դրսից վերադարձած, մեծ փորձ ունեցող ռազմական գործիչներով, որոնք խոշոր դեր խաղացին Ղարաբաղի ու Հայաստանի ազատագրական բանակի հզորացման գործում: Նրանց թիվը շատ-շատ է, բայց հատկապես երկուսին ենք ուզում առանձնացնել՝ հանրահայտ Կոմանդոսը (Արկադի Տեր-Թադևոսյան) և լեզենդար Մոնթե Մելքոնյանը: Մեր ազատագրական բանակի կազմակերպման բնագավառում հույժ կարևոր դեր է խաղացել Վազգեն Սարգսյանը: Խորհրդային բանակի կազմալուծումից առաջ, օգտվելով դրա հակադարաբաղյան գործողություններից, թուրք-ազերիների խաժամուժ, թալանչի ջոկատները կատարեցին խոշոր ավերածություններ: Արցախի հայերի նկատմամբ ոճրագործություններ, ցեղասպանություն իրագործվեցին հատկապես Մարտակերտի շրջանի դաշտային գյուղերում՝ Մարաղայում, Լենինավանում, ինչպես նաև Գետաշենում, Մարտունաշենում, որոնք այսօր էլ բռնազավթված են:

Գետաշենի ու Մարտունաշենի հայաթափման պլանը մշակվեց և իրականացվեց խորհրդային բանակի ու Ադրբեջանի համատեղ ուժերով: Սակայն, երբ ռուսական զորքերը հեռացան տարածքից, Ադրբեջանի մեծաքանակ զորաջոկատները չդիմացան հայկական նորաստեղծ բանակի ու կամավորական խմբերի հուժկու հարվածներին: Արդյունքը եղավ այն, որ Լեռնային Ղարաբաղի տարածքի մեծ մասն ազատագրվեց թուրք-ազերիներից: Դեռ ավելին, մեր ռազմական ջոկատներն այնքան առաջ շարժվեցին, որ Կիրովաբադ, Բարդա, Եվլախ և ադրբեջանական այլ բնակավայրերի բնակիչները ճողոպրեցին:

⁴ Տես նույն տեղը, էջ 402:

Ադրբեջանի այդ ժամանակվա նախագահը, շատ վտանգավոր հայատյաց, երկերեսանի Հեյդար Ալիևը, զգալով հայկական բանակի ուժը, արագորեն միջոցներ ձեռնարկեց վտանգը կանխելու համար: Նա նույնիսկ օգտագործեց Թուրքիայի նախագահ Օզալի հնարավորությունները՝ հայկական զորքերի առաջխաղացումը դադարեցնելու համար:

Ցավոք, մեր այդ ժամանակվա նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանով դադարեցվեց հայկական զորքերի առաջխաղացումը, թեև Արցախի տարածքի որոշ հատվածներ դեռևս մնացել էին թշնամու կողմից օկուպացված: Հայկական ազատագրական ջոկատները մինչև 1993 թ. ազատագրել էին Արցախի տարածքի մեծ մասը: Նույն թվականի հունիսի 12-ին Մարտունու շրջանի սահմաններում թուրք-ազերիների գրոհը կասեցնելու ժամանակ ԼՂՀ սահմանի մոտ հերոսաբար զոհվեց ԼՂՀ Մարտունու շրջանի ռազմական ուժերի հրամանատար Մոնթե Մելքոնյանը, ով Արցախի պաշտպանության հրամանատարներից մեկն էր: Շնորհիվ նրա հնուտ ղեկավարման և կազմակերպչական տաղանդի, Մարտունու շրջանը ամենաշուտը մաքրվեց թշնամուց և դարձավ ԼՂՀ պաշտպանական ամրոց:

Ղարաբաղյան բանակի մեծագույն նվաճումներից էր անառիկ Շուշի քաղաքի ազատագրումը: Այս եզակի բերդաքաղաքի (որտեղ ազերիները կուտակել էին հսկայական զինամթերք) գրավումը մի կողմից՝ ապացուցեց հայ ազատամարտիկների ու նրանց հրամանատար Կոմանդոսի ռազմական մեծ հմտությունը, մյուս կողմից՝ Շուշի քաղաքի Ղազանչեչոց եկեղեցում հսկայական զենք կուտակած ազերիների վայ-հրամանատարների, զինվորների ապաշնորհությունն ու վախկոտությունը: Շուշին ազատագրվեց 1992 թ. մայիսի 9-ին՝ կրկին դառնալով է Արցախի մշակութային կենտրոնը:

Հաշվի առնելով հայկական ազատագրական բանակի փայլուն հաղթանակները՝ 1994 թ. մայիսի 4-ին Ռուսաստանի նախաձեռնությամբ Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում տեղի ունեցավ ԱՊՀ անդամ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի շրջանակներում գործող՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հանձնաժողովի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին Ադրբեջանի, Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Ռուսաստանի և Ղրղզստանի խորհրդարանների ղեկավարները: Դա շատ կարևոր իրադարձություն էր, քանի որ, փաստորեն, ԼՂՀ-ն ներկայացավ և ձանաչվեց որպես Ադրբեջանի հետ հակամարտող կողմ:

Ադրբեջանի պատվիրակության ղեկավարը (Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Ջախլովը) այստեղ փորձեց ծախողել զինադադարի հաստատման հարցը: Ադրբեջանի մշտական անազնիվ քաղաքականությունը նորից դրսևորվեց մայիսի 5-ին, բանակցությունների ավարտից հետո, երբ պետք է ստորագրվեր Ադրբեջանի ու ԼՂՀ-ի միջև զինադադարի ու ղարաբաղյան խնդրի կարգավորման պահանջների կատարման արձանագրությունը: Ադրբեջանի պատվիրակության ղեկավարը հրաժարվեց այն ստորագրել:

Այսպիսով՝ Բիշքեկի բանակցությունների արձանագրությունը ստորագրեցին Հայաստանի, ԼՂՀ, Ռուսաստանի, Ղրղզստանի պատվիրակությունների ղեկավարները, իսկ Ադրբեջանը, որի նախագահը այդ օրերին մեկնել էր Եվրոպա՝ ՆԱՏՕ-ին անդամագրվելու խնդրով, այնտեղից էլ Անկարա, համաձայնեց ստորագրել երկու օր հետո միայն: Հեյդար Ալիևը ստիպված էր այդ քայլին գնալ, քանի որ չստացավ Եվրոպայի ու Անկարայի աջակցությունը: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը և Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահը ստորագրեցին այդ փաստա-

թուղթը, իսկ դա նշանակում էր, որ, Ադրբեջանը, փաստորեն, ԼՂՀ-ն ճանաչելու առաջին քայլն էր կատարում:

Ջինադադարի կնքումից հետո ԼՂՀ բնակչությունը շուրջ մեկ տարի ապրեց խաղաղ պայմաններում. հնարավորություն էր ստեղծվել զբաղվելու տնտեսության վերականգնման խնդիրներով:

Թուրք-ազերիների բարբարոսությունների հետևանքով Արցախին հասցված վնասը ընդհանուր առմամբ 10 միլիարդ դոլարից ավելի էր. վնասվել էին՝ 8 հազ. օբյեկտ, 7 հազ. բնակելի շինություն, ուսումնական 12 հաստատություն, 47 բուժփմնարկ, մշակութային բազմաթիվ օջախներ:

Իսկ եթե հաշվի առնենք նաև Ադրբեջանից ամենավայրենի ծեղով բռնագաղթված 350 հազ. հայերի ունեցվածքը, բանկերում եղած գումարների թալանը, ապա ադրբեջանաբնակ հայերին հասցված վնասները տասնյակ անգամ ավելի են, որի համար, ըստ միջազգային օրենքների, Ադրբեջան կոչվող պետությունը պետք է պատասխան տա:

Իսկ ինչպիսին է եղել Հայաստանի իշխանությունների վերաբերմունքն այդ տարիներին հանրապետության տարբեր վայրերում եղած 160 հազ. ազերիների նկատմամբ: Բոլորին տրամադրվել են տրանսպորտային միջոցներ, նրանք իրենց հետ տարել են ամբողջ ունեցվածքը, հնարավորություն են ունեցել իրենց բնակարանները փոխանակելու կամ վաճառելու: Մինչդեռ, Բաքվի, Սումգայիթի և Ադրբեջանի մյուս բնակավայրերում ապրող հայերին ենթարկել են գազանային տանջանքների, կատարվել է ցեղասպանություն, իսկ կենդանի մնացածները նույնիսկ հազուստները վերցնել չեն կարողացել:

1994 թ. մայիսին կնքված զինադադարը տևեց ընդամենը մեկ տարի, որից հետո, մինչև այժմ էլ Հայաստանի Հանրապետության և անկախացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանագծի ամբողջ երկարությամբ ադրբեջանցիները օր ու գիշեր խախտում են զինադադարը, որի պատճառով զոհվում են ոչ միայն մեր սահմանապահ զինվորները, այլև սահմանային գյուղերի բնակիչները: Թշնամու կողմից զինադադարի խախտումները շատ ավելի հաճախակի են դարձել Իլիհամ Ալիևի իշխանության օրոք:

Հեյդար Ալիևը որքան էլ հայատյաց էր, խորամանկ, այնուամենայնիվ, մեր պատմության, հայերի մասին որոշակի պատկերացում ուներ, մի բան, որ չի կարելի ասել անօրեն կերպով նախագահ դարձած նրա որդու մասին.:

Հակառակ պարագայում՝ ինչպե՞ս կարող է այդքան բարձր պաշտոն զբաղեցնող անձնավորությունը հայտարարել, թե «Ղարաբաղը մերն է, Սևանը մերն է, Երևանը մերն է» և այլ կարգի զառանցանքներ: Կամ ինչպե՞ս կարող է երկրի ղեկավարը սեփական մշակույթի խոշոր դեմք համարվող իր ազգակցին, հանրահայտ գրողին հայերի մասին ճիշտ գնահատական տալու համար հալածել, նրա գրքերը հրապարակայնորեն այրել, ծաղրել...

Չենք կարող մի կարևոր փաստ էլ չարձանագրել:

Աշխարհի բոլոր երկրների պատմական թանգարաններում ցուցադրված հին աշխարհի քարտեզներում Հռոմեական կայսրության, Բյուզանդիայի, Հունաստանի, Պարսկաստանի, Բաբելոնի, Ասորեստանի, Չինաստանի, Հնդկաստանի ու այլ երկրների կողքին իր տեղն է զբաղեցնում նաև Հայաստանը: Ադրբեջան կոչվող երկրում է միայն, որ ցուցադրվող այդ քարտեզներում Հայաստանը բացակայում է. սա տգիտության դրսևորման վառ օրինակ է...

Մեր կարծիքով՝ արդարացի կլիներ 1994 թ. մայիսին ոչ թե Հեյդար Ալիևի խնդրանքով զինադադար կնքելը, այլ Ադրբեջանը կապիտուլյացիայի են-

թարկելը: Ըստ այդմ՝ Ադրբեջանը ազատագրված Արցախին և առհասարակ հայությանը հասցված բոլոր տեսակի վնասները պետք է փոխհատուցի:

Ինչ վերաբերում է տարբեր կարգի բանակցությունների ժամանակ արժարժվող փոխզիջումային տարբերակներին, ապա ճշմարտությունն այն է, որ իր իսկ հրահրած պատերազմում խայտառակ պարտություն կրած Ադրբեջանին ոչինչ չունենք զիջելու, իսկ վերջինս պարտավոր է վերադարձնել նաև ԼՂՀ Մարտակերտի ու Մարտունու շրջանների բռնազավթված տարածքները, ինչպես նաև մեր պատմական, հերոսական Գյուլիստանի տարածքը:

1991 թ, դեկտեմբերի 10-ին ԼՂՀ բնակչության ավելի քան 90%-ը քվեարկել է անկախության օգտին: Այդ տարիներին ոչ միայն վերացվել են թուրքազերիների վայրագությունների հետևանքները, այլև արագորեն զարգանում են տնտեսության բոլոր բնագավառները: Ամեն տարի ԼՂՀ այցելող արտասահմանյան պետական շատ գործիչներ, ինչպես նաև հարյուրհազարավոր զբոսաշրջիկներ հիացմունք են ապրում՝ տեսնելով Արցախի պետականության, սոցիալ-տնտեսական վիճակը, բնակչության կարգապահությունը, հյուրասիրությունը, անզուգական բնաշխարհին ու պատմաճարտարապետական հուշարձանները:

СЕРГЕЙ МЕЛКУМЯН

Профессор кафедры „Макроэкономики“ АГЭУ,
доктор географических наук

Азербайджан должен возместить нанесенный вред и вернуть захваченные территории Арцаха.-

Арцах (Нагорный Карабах) был насильно присоединен к Азербайджану против воли армянского народа и по воли Сталина, Багирова и насилием Красной Армии. Таким образом, почти 70 лет находясь в составе Азербайджана, Арцах-Карабах был в основном сырьевой базой для этой новоиспеченной республики. В Нагорном Карабахе не были построены промышленные предприятия, по этому не имея место для работы, молодежь Арцаха вынужденно покидала свою Родину. Однако народ Арцаха варварское отношение против армянского населения не смог терпеть. В конце 1980-ых годов весь народ героического Арцаха восстал, победил и создал независимую страну НКР.

SERGEY MELKUMYAN

Professor at the Chair of „Microeconomics“ at ASUE,
Doctor of Geographical Sciences

Azerbaijan Ought to Compensate All the Damages Caused and Return Captured Territories of Artsakh.-

Artsakh (Nagorno-Karabakh) was violently attached to Azerbaijan against the will of the Armenian people and on Stalin's, Bagirov's will and with the help of the Red Army. Thus, for nearly 70 years being in the structure of Azerbaijan, Artsakh-Karabakh was generally the source of materials for this newly formed republic. Governors of Azerbaijan in every possible way used all the resources of the Artsakh-Karabakh country. There were no industrial enterprises in Nagorno-Karabakh and without a chance of having jobs, Artsakh's youth was compelled to leave their Motherland. However Artsakh's people couldn't stand the barbarous attitude to the Armenian population. At the end of the 1980-ies all the people of heroic Artsakh rose, won and created the independent country of NKR.